Խոսեք հայերեն, երբ որն է բան եք ցանկանում

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիա

- Խարտիան պարտավորեցնում է իշխանություններին երաշխավորել, որպեսզի մենք ի վիճակի լինենք պահանջել մեր մայրենի լեզվով ստանալ բանավոր և գրավոր տեղեկություններ կամ ծառայություններ:
- **coe.int/minlang**

Լեզվական ուղեցույց Հայոց լեզուն Հունգարիայում

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիան դա Եվրոպայի խորհրդի մի համաձայնագիր է, որը պաշտպանում է հայոց լեզուն և աջակցում է նրա զարգացմանը ,այդ թվում նաև Հունգարիայում : Այս լեզվական ուղեցույցը կառաջնորդի ձեզ կանոնադրության Խարտիայի այն դրույթներին , որոնք Հունգարիան պետք է կիրառի հայոց լեզվի նկատմամբ:

Սակայն, ոչ Հունգարիան , ոչ էլ խարտիան առանց ձեզ չեն կարող պահպանել ձեր լեզուն: Հիմնական պատասխանատվությունը կրում եք դուք: Հայոց լեզուն Հունգարիայում կարող է գոյատևել միայն այն դեպքում, եթե դուք օգտագործեք այն ամեն օր և ամենուրեք:

Պարզաբանենք՝ լեզուն, որն օգտագործվում է միայն ճաշի սեղանի շուրջ, ի վերջո կմահանա :

Մի փակեք ձեր լեզուն տանը, ըմբռնեք Խարտիայի յուրաքանչյուր դրույթը և օգտվեք այն բազմաթիվ հնարավորություններից, որոնք այն երաշխավորում է ամենօրյա հասարակական կյանքում հայոց լեզվի օգտագործման համար:

Խոսեք ձեր լեզվով, որպեսզի չկորցնեք այն:

Նպատակները և սկզբունքները

Հունգարիան իրականացնում է իր քաղաքականությունը, օրենսդրական և պրակտիկ գործունեությունը հայոց լեզվի նկատմամբ, այն տարածքներում, որտեղ այդ լեզուն գործածվում է, և համապատասխան հայոց լեզվի կարգավիճակի, հիմվում է հետևյալ նպատակների և սկզբունքների վրա.

- հայոց լեզվի ճանաչումը, որպես մշակութային հարստության արտահայտման միջոց
- հաշվի առնել հայոց լեզվի աշխարհագրական տարածքը, ապահովելով, որ գոյություն ունեցող կամ նոր վարչական բաժանումները խոչընդոտներ չստեղծեն հայոց լեզվի զարգացմանը
- հայոց լեզվին աջակցելու և այն պահպանելու նպատակով ակտիվ գործունեությունների անհրաժեշտություն
- հայոց լեզվի բանավոր և գրավոր գործածության խրախուսումը և / կամ աջակցումը հասարակական եւ անձնական կյանքում (հասարակական կյանքը ներառում է կրթությունը, դատական և վարչական իշխանությունները, ԶԼՄ - ները, մշակույթը, տնտեսական և սոցիալական կյանքը , միջսահմանային փոխանակումները)
- սույն խարտիայի գործունեության ոլորտներում հայոց լեզուն գործածող խմբերի և տվյալ պետության մեջ նույն կամ նման ձևով լեզուներ գործածող այլ խմբերի միջև կապերի պահպանումն ու զարգացումը, ինչպես նաև մշակութային հարաբերությունների հաստատումը այդ պետության մեջ այլ լեզվուներ գործածող խմբերի հետ
- տրամադրել համապատասխան ձևեր և միջոցներ հայոց լեզվի դասավանդման և ուսումնասիրման համար, բոլոր համապատասխան փուլերում (օրինակ մանկապարտեզներ, տարրական, միջնակարգ, տեխնիկական և մասնագիտական կրթություն)
- հայոց լեզուն գործածող տարածքներում ապրող և հայերեն չխոսող մարդկանց համար ստեղծել պայմաններ լեզվի ուսանելու համար, եթե նրանք ունեն նման ցանկություն
- համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ուսումնասիրման և հետազոտման աջակցում
- սույն խարտիայի ոլորտներում ընդգրկված ազգամիջյան փոխանակումների համապատասխան ձևերի զարգացումը այն պետությունների հետ, որոնք հայոց լեզուն օգտագործվում են նույնական կամ նման ձևով :

Հունգարիան պարտավորվում է վերացնել, եթե դա դեռ արված չէ, հայոց լեզվի գործածության հետ կապված ցանկացած չարդարացված խտրականություն, բացառություններ, սահմանափակումներ կամ արտոնություններ, որոնց նպատակն է արգելակել կամ վտանգել այս լեզվի պահպանումը և զարգացումը : Հայոց լեզվի նկատմամբ հատուկ միջոցների ընդունումը այդ լեզուն գործածողների և մասացած բնակչության միջև առավել իրավահավասարություն հաստատելու նպատակով, կամ որոնք պատշաճ ձևով հաշվի են առնում իրենց առանձնահատկությունները, չեն դիտարկվում որպես առավել տարածված լեզուներ գործածող անձանց նկատմամբ խտրականություն :

Հունգարիան պարտավորվում է համապատասխան միջոցառումներ իրականացնելով աջակցել երկրի բոլոր լեզվական խմբերի միջև ավելի մեծ փոխըմբռնմանը, մասնավորապես, իրենց երկրում կրթության և մասնագիտական պատրաստման խոնդիրների մեջ ներգրավելով հարգանքը, ըմբռնումը և հանդուրժողականությունը հայոց լեզվի նկատմամբ և խրախուսել ԶԼՄ-ների գործողությունները այդ նպատակին հասնելու համար:

Հայոց լեզվի նկատմամբ իր քաղաքականությունը սահմանելիս Հունգարիան պետք է հաշվի առնի հայոց լեզուն գործածող խմբերի պահանջմունքներն ու ցանկությունները: Անհրաժեշտության դեպքում Հունգարիան նպաստում է այնպիսի մարմինների ստեղծմանը, որոնք կաջակցեն իշխանություններին հայոց լեզվին վերաբերող բոլոր հարցերում:

Սույն Խարտիայի կատարմանն ուղղված միջոցառումների բնույթն ու ծավալները պետք է որոշվեն ճկուն կերպով, հայերեն խոսող խմբերի պահանջմունքների ու ցանկությունների հաշվառմամբ և նրանց ավանդույթների ու յուրահատկությունների պահպանմամբ:

Դուք, Խարտիայից բացի, կարող եք նաև օգտվել Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայից: Այս պայմանագրով պետությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար ապահովում է պայմաններ, որոնք անհրաժեշտ են պահպանելու և զարգացնելու համար իրենց մշակույթը և ինքնության հիմական տարերը (լեզուն, կրոնը, ավանդույթները և մշակութային ժառանգությունը) և պաշտպանում այդ անձանց ասիմիլյացիայից: Շրջանակային կոնվենցիան հանրային կյանքում երաշխավորում է փոքրամասնությունների լեզվի օգտագործման իրավունքը և տարածվում է այնպիսի ասպեկտների վրա ինչպիսիք են՝ դասագրքերի մատչելիությունը, կրթական և ուսումական մասնավոր հաստատություններ հիմնելու և տնօրինելու իրավունքը, փոքրամասնությունների լեզվով անձնանունների օգտագործման և փողոցների անվանումների ցուցադրման իրավունքը, փոքրամասնությունների լեզվով մասնավոր մակագրությունների հրապարակավ ցուցադրման իրավունքը, արդյունավետ մասնակցությունը հանրային կյանքին (ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունները) և փոքրամասնությունների պաշտպանության մասին համաձայնագրերի կնքումը այլ պետությունների հետ:

Եթե առաջացել են խնդիրներ

Հունգարիայում օրենսդրությանը համապատասխան հիմնադրված կազմակերպությունները և ասոցիացիաները կարող են հրավիրել Եվրոպայի Խորհրդի ուշադրությունը այն հարցերին, որոնք կապված են խարտիայի հանդեպ Հունգարիաի Հունգարիայի ընդունած պարտավորություններին: Այդպիսի հայտարարությունները կարող են ուղարկվել հետևյալ հասցեով՝

European Charter for Regional
or Minority Languages
Council of Europe
F-67075 Strasbourg
minlang.secretariat@coe.int

Լեզվական ուղեցույցը ստեղծված է խարտիայի դրույթների ընդհանուր տեղեկությունների տրամադրման համար այն լեզվի վերաբերյալ , որի վրա տարածվում է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի գործողությունը: Այս ուղեցույցը չի փոխարինում խարտիան: Կողմերի ընդունած բոլոր դրույթների և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ցանկի իրական ձևակերպման համար խնդրում ենք Ձեզ դիմել Եվրոպայի Խորհրդի կայքին http://conventions.coe.int: Այլ լեզուների ուղեցույցները աստիճանաբար կմշակվեն: